ՀԽՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Մասսայական ձեռնարկումների սեկտոր

#537#

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԿՆՔՎԵԼԻՔ ՏԻՊԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ



ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1931 Թ.

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼ-Տ 6931 (բ)
ՊԱՏՎԵՐ 6095
ՏԻՐԱԺ 1000

13 ..ԽԱ 2017

ՀՐԱՀԱՆԳ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԿՆՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

(Բոլոր ձեռնարկություններին, կոլխոզներին, սովխոզներին, ՄՏԿ-ներին և դպրոցներին, տնտեսական, պորֆեսիոնալ և կոմյերիտմիության կազմակերպություններին, բոլոր լուսավորության որգաններին և Լուսաշխի միության կազմակերպություններին):

1930—31 *ուս. տարում դպրոցների ամրացումը տնտեսական ձեռնարկություններին զգալի չափով նպաստել է կրթական գործի և արտադրական-հասարակական աշխատանքի իրար հետ կապվելուն:*

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն իր՝ տարրական և միջնակարգ դպրոցների մասին սեպտեմբերի 5-ի վորոշման մեջ գրված է, վոր ներկայումս արդեն «պոլիտեխնիկ կրթության բազայի վրա դպրոցների վերակառուցման հիմքը դրված է»: Միաժամանակ Կենտկոմը նույն վորոշման մեջ արձանագրում է, վոր «խորհրդային դպրոցը դեռ հեռու չէ համապատասխանելու այն հսկա պահանջներին, վորպիսիք առաջադրում է սոցիալիստական շինարարության ներկա ետապը»: Դպրոցի հիմնական թերությունը նա է, վոր «ուսումը դպրոցում հանրագիտական գիտելիքների անհրաժեշտ պաշար չի տալիս և անբավարար է լուծում տեխնիկումներին ու բարձրագույն դպրոցներին լրիվ գրագետ մարդիկ տալու գործը, մարդիկ, վորոնք լավ տիրապետեին գիտությունների հիմունքներին (ֆիզիկա, քիմիա, մատեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն)»:

Անցյալ ուսումնական տարում սովորողների արտադրական աշխատանքի կազմակերպման պրոցեսում առանձին դպրոցներ և ձեռնարկություններ թույլ են տվել մի շարք շեղումներ և սխալներ: Անցյալ տարվա պայմանագրերը չատ դեպքում համարյա վոչ մի ուշադրություն չեն դարձրել դպրոցում հանրագիտական տարրականների գործնական դրված քի խնդիրներին: Շեղերը գործնական

աշխատանքի պրոցեսում չեն յելել այն սկզբունքից, որ ուսուցման կապը արտադրական աշխատանքների հետ պետք է անցկացնել ցայնպիսի հիմունքներով, որպեսզի սովորողների ամբողջ հասարակական արտադրական աշխատանքը յենթակա լինի (ըստ) դպրոցի կրթական և դաստիարակչական նպատակներից»։

Բանվորական լայն մասսաների մասնակցությունը դպրոցի տորյա ծրագրա-մեթոդական աշխատանքներին և ընդհանուր կրթության, դպրոցի դաստիարակության և ուսման որակի բարձրացման համար մղվելիք պայքարում յեղել է բոլորովին անբավարար։

Դպրոցների կցումը տնտեսական հիմնարկ-ձեռնարկություններին անցյալ ուսումնական տարում մի շարք վայրերում կրել է ձևական բնույթ. տնտեսավարներն անհրաժեշտ ուժանդակություն չեն ցույց տվել և պայմաններ չեն ստեղծել դպրոցների համար աշակերտության արտադրական պրակտիկան կազմակերպելու խնդրում։ Դպրոցների վարչություններն իրենց հերթին չեյին պլանավորում և ղեկավարում աշակերտության արտադրական աշխատանքը, որի հետևանքով տնտեսական ձեռնարկություններում տարվող պրակտիկան հաճախ յենթարկվում եր պատահականության։

Դպրոցների և ձեռնարկությունների մեջ կնքվելիք պայմանագրերի կատարումը ունի խոշոր նշանակություն։ Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի վորոշման և անցյալ տարվա մասսայական վորձի հիման վրա վերակնքվելիք պայմանագրերը պետք է հանդիսանան դպրոցների և ձեռնարկությունների համար միանգամայն կոնկրետ աշխատանքի ծրագրեր՝ միջնակարգ և տարրական դպրոցների մասին Հայկոմկուսի Կենտկոմի սեպտեմբերի 5-ի վորոշումները կյանքում իրագործելու համար։

Դպրոցի պոլիտեխնիկացման համար մղվելիք պայքարում Հայկոմկուսի Կենտկոմի կողմից մեզ վրա դրված լուրջ խնդրի լուծումը ամբողջապես կախված է նրանից, թե վորչափով մենք մեր ամենորյա աշխատանքների ընթացքում վճռական հարված կհասցնենք բոլոր աջ ոպորտունիստական և «ձախ» խոտորումներին, դպրոցի և ուսուցչի դերը նվաստացնող վորձերին, դպրոցը ՀՍՍՌ-ական միջավայրի մեջ լուծելու ցանկություններին, սովորողների արտադրական աշխատանքը խեղաթյուրողներին (ուսումը հասարակական աշխատանքներին յենթարկելը և այլն) և «դործնականում չստուգված մեթոդների մասսայական կիրառմանը»։

11-26236ք

ՀՍԽՀ Ժողտնտխորհը, Լուսժողկոմատը, Հայ. Արհ. Մ. խորհուրդը, Հայ. ԼԿՅԵՄ Կենտկոմը, Լուսաշխի Կենտվարչությունը, Հաղժողկոմատը, Մատժողկոմատը, Փոստհեռժողկոմատը, Կոմ. տնտես. ժողկոմատը, Հողժողկոմատը, Կոլխոզկենտրոնը, ՄՏԿ կենտրոնը և Հայտնարկոսպը առաջարկում են.

1. Անմիջապես անցնել պայմանագրերի վերակնքման աշխատանքներին բոլոր դպրոցների և ձեռնարկությունների միջև համաձայն սրա հետ առաջադրվող տիպական պայմանագրերի, որ ընդունված է վերևում թվարկած կազմակերպությունների կողմից. պայմանագրերի կնքման աշխատանքները պետք է վերջանան վոչ ուշ դեկտեմբերի 15-ից։

2. Պայմանագրերի կնքմանը պետք է մասսայական կամպանիայի բնույթ տալ։ Հիմնական խնդիրը պետք է լինի Համկոմկուսի Կենտկոմի վորոշումը դպրոցների մասին գործնական կերպով հասցնել ամեն մի բանվորի, կոլխոզնիկի, ուսուցչի և սովորողի՝ հաշվի առնելով տեղական պայմանները։ Դպրոցների և ձեռնարկությունների պայմանագրերը պետք է վերակնքվեն կուսակցության Կենտկոմի վորոշման մասսայական ուսումնասիրության հիմունքներով, հաստատելով այդ պայմանագրերը բանվորական և դպրոցական կոլեկտիվների ընդհանուր ժողովներում։

Անցյալ տարվա փորձը ցույց է տալիս, որ այդ կամպանիայի անցկացումը մի շարք դեպքերում կրել է ձևական բնույթ, դրա համար Հայաստանի Ժողտնտխորհը, Լուսժողկոմատը, ՀՍՄԽ-ը, ԼԿՅԵՄ Կենտկոմը, Լուսաշխի ԿԿ-ը, Հաղժողկոմատը, Մատժողկոմատը, Փոստհեռժողկոմատը, Կոմտնտժողկոմատը, Հողժողկոմատը, Կոլխոզկենտրոնը, ՄՏԿ կենտրոնը և Հայտնարկոսպը առաջարկում են իրենց տեղական կազմակերպություններին վրձական պայքար հայտարարել պայմանագրերի կնքմանը, ամեն տեսակի բյուրոկրատիկ մոտեցում ունենալու փորձերին, մինչև իսկ բեկանել կնքված պայմանագրերը այնտեղ, որտեղ բանվորական հասարակայնությունը պայմանագրերի քննությանը և տարրական միջնակարգ դպրոցների մասին Հայկոմկուսի Կենտկոմի վորոշումների ուսումնասիրությանը մասնակից չի դարձրված։

3. Պայմանագրերի կնքման ժամանակ թույլ չտալ դպրոցը կցելու այնպիսի ձեռնարկությունների, որոնք ի վիճակի չեն լինի կազմակերպելու սովորողների համար դպրոցի ուսումնադաստիարակչական նպատակներին յենթարկվող արտադրական աշխատանք (բաղնիս, լվացքատուն և այլն)։

4. Դպրոցում խորհրդային պոլիտեխնիկական կրթություն կազմակերպելու նպատակով, վորը սովորողներին պետք է տա «գիտությունների հիմքը», տեսականում և գործնականում ծանոթացնի նրանց «արտադրության բոլոր գլխավոր ճյուղերին», անցկացնի սերտ կապ արտադրական աշխատանքի հետ, ՀՍԽՀ-ի ժողտնտխորհը, Լուսժողկոմատը, ՀԱՄԽ-ը, ԼԿՅԵՄ կենտկոմը, Լուսաշխի ԿԿ-ը, Հողժողկոմատը, Մատժողկոմատը, Փոստհեռժողկոմատը, Կոմտնտժողկոմատը, Հաղժողկոմատը, Կոլխոզկենտրոնը, ՄՏԿ-կենտրոնը և Հայտնարկոոպը առաջարկում են իրենց կից կազմակերպություններին տեղերում ուսումնասիրել, հաշվի առնել բոլոր ֆաբրիկաները, գործարանները, ելեկտրոկայանները, կոլխոզները և այլն (տեղական պայմանների տեսակետից) և պայմանավորվելով ռայոնի (քաղաքի) ձեռնարկության, կոլխոզի հետ, կազմակերպել սովորողների եքսկուրսիաներ դեպի այդ ձեռնարկությունները, դպրոցների ուսումնական Ծրագրերից բղխող վաղորոք մշակված պլանով:

5. Ապահովել դպրոցների և ձեռնարկությունների միջև կնքված պայմանագրերի կատարման սիստեմատիկ ստուգումը:

Պայմանագրերի առաջին մասսայական ստուգում անցկացնել 1932 թ. մարտ ամսում, պարգևատրելով լավ դպրոցներին և ձեռնարկություններին, հարվածային բանվորներին և ուսուցիչներին պայմանագրերը լավ կատարելու համար:

ՀՍԽՀ ժողտնտխորհի նախագահ՝ Ս. ՄԱՐՏԻԿՅԱՆ
ՀՍԽՀ Լուսժողկոմ՝ Դ.Ր. ՍԻՄՈՆՅԱՆ
ՀԱՄԽ-ի նախագահ՝ Խ. ԴԵՄԻՐՉՅԱՆ
Լուսաշխի Կենտվարչության նախագահ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀԼԿՅԵՄ Կենտկոմի քարտուղար՝ Լ. ԲԱԲՍԵՂՅԱՆ
Հաղժողկոմի Հայաստանի լիազոր՝ Ս. ՎԵՐՄԻՇՅԱՆ
Փոստհեռժողկոմի Հայ. լիազոր՝ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՀՍԽՀ Կոմտնտժողկոմ՝ Հ. ՅԱՂՈՒԲՅԱՆ
ՀՍԽՀ Մատժողկոմ՝ Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՍԽՀ Հողժողկոմ՝ ԳՈՒԼՈՅԱՆ
ՀՍԽՀ Կոլտնտվարչ. նախագահ՝ Հ. ՍԵԼԱՆՅԱՆ
ՀՍԽՀ ՄՏԿ Կենտ. վարչ. նախագահ՝ Մ. ԱՐԱՔԱ
Հայտնարկոոպի Կենտ. վարչ. նախագահ՝ Հ. ՅԵՐԶՆԿՅԱՆ

ՏԻՊԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԲԱՂԱՔԱՑԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Կուսակցության Կենտկոմի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցների մասին հանդիսանում է պոլիտեխնիզմի հիման վրա մասսայական դպրոցի վերակառուցման նոր շրջանի սկիզբը:

Կուլտուրական հեղափոխության այդ կարևորագույն բաժնում նշելով հետագա հարձակման ծրագիրը, Կենտրոնական Կոմիտեն, վորպես սրվա հերթական խնդիր, առաջ է քաշում ընդհանուր, պարտադիր 7-ամյա ուսուցման անցնելը, նպատակ ունենալով կուսակցության ծրագրի՝ մինչև 17 տարեկաններին ընդհանուր ու պոլիտեխնիկական կրթություն տալու պահանջի արագ կիրառումը, և նոր աստիճանի վրա յե դնում դպրոցի աշխատանքի վրակի, ուժեղ բարձրացման համար մղվող պայքարը, դնելով այնպիսի նոր խնդիրներ Լուսժողկոմատի և ժողովրդական լուսավորության բոլոր որգանների, կենտրոնական և տեղական շահագրգռված բոլոր կազմակերպությունների առաջ, վորոնք կապված են դպրոցական աշխատանքի շրջադարձի համար և այն սխալների ու խեղաթյուրումների դեմ մղվող պայքարի հետ, վորոնք տեղի յեն ունեցել դպրոցի պոլիտեխնիկական սկզբունքներով վերակառուցման պրոցեսում:

Անցյալ տարի մեր յերկրի բանվոր դասակարգը և աշխատավորությունը հսկայական հաջողություններ յե հասել՝ ինչպես յերկրում ընդհանուր պարտադիր ուսուցումը մտցնելու, նույնպես և դպրոցը պոլիտեխնիկական հիմունքներով վերակառուցելու առաջարկում, այնուամենայնիվ, Համկոմկուսի Կենտկոմի վորոշումը նշում է, վոր տվյալ մոմենտում դպրոցի հիմնական պակասությունն այն է, վոր ուսուցումը դպրոցում չի տալիս հանրակրթական գիտելիքների բավարար ծավալ և անբավարար կերպով է վճռում տեխնիկումների և բարձրագույն դպրոցների համար միանգամայն դրական մարդիկ պատրաստելու խնդիրը, մարդիկ, վորոնք լավ տիրապետեն գիտությունների հիմունքներին (ֆիզիկա, քիմիա, մատեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն): «Դրանով,—ընդգծում է Կենտրոնական Կոմիտեն,—պոլիտեխնիզացիան մի շարք դեպքերում ստանում է ձևական բնույթ և չի պատրաստում սոցիալիզմի բաղմակողմանի կերպով զարգացած կառուցողներ, վորոնք տեսականը կապեն գործնականի հետ և տիրապետեն տեխնիկային»:

Այս ուսումնական տարվա գլխավոր խնդիրը հանդիսանում է այդ արմատական թերության վերացումը։ Ինչպես դպրոցը, այնպես և ձեռնարկության բանվորներն ու դործարանային բոլոր կազմակերպությունները պետք է հիշեն, որ «յուրաքանչյուր փորձ, որը արվում է դպրոցի պոլիտեխնիզացիան անջատելու գիտությունների սիստեմատիկ և ճիշտ յուրացումից, առանձնապես Ֆիզիկայի, մատեմատիկայի, քիմիայի յուրացումից, որոնց դասավանդումը պետք է դրված լինի խիստ որոշ ու ինամքով մշակված ծրագրի ու ուսման պլանների հիման վրա և տարվի խըստիվ, հաստատուն դասատախտակով,—հանդիսանում է պոլիտեխնիկական դպրոցի դաղափարի ամենակոպիտ խեղաթյուրումը» (Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումից)։

Պետք է ավելի ամրացնել դպրոցի կապը արտադրության հետ, ձգտելով ուսուցման միացումը արտադրական աշխատանքին, այն հիմունքով, որ «աշակերտների ամբողջ հասարակական արտադրական աշխատանքը յենթարկվի դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին» (Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումներից)։

Պոլիտեխնիկական դպրոցի համար մղվող պայքարի դեմ Համկոմկուսի (բ) Կենտկոմի կողմից մեղ վրա դրված հսկայական խնդիրների կատարումը կախված է նրանից, թե մեր առորյա աշխատանքի ընթացքում մենք վորքան վճռական կերպով հակահարված կտանք դպրոցի և ուսուցչի դերն իջեցնելու բոլոր աղավաղումներին ու փորձերին, դպրոցը շրջապատող միջավայրի մեջ լուծելու ձգտումներին, աշակերտների արտադրական աշխատանքը կազմակերպելու մեջ կատարվող խեղաթյուրումներին (դպրոցական ուսուցումը հասարակական աշխատանքի յենթարկելու և այլն), նախորոք ու դործնականում չստուգված մեթոդների մասսայական մաշտարով կիրառումների ձգտումներին, որոնց բղխում են դպրոցի մահացման, հակալենինյան «ձախ» թեորիայից։

«Պոլիտեխնիկական դպրոցի կառուցման ճանապարհին վտանգը կուսակցության աջ ոպորտունիստական աղավաղումներն են, որոնց դեմ պետք է հաջող կերպով պայքարել։ Այդ աղավաղումները տանում են դեպի դպրոցի պոլիտեխնիզացիայից հրաժարվելը, դեպի հին, սխոլաստիկ դպրոցի պահպանելու փորձերը, դեպի տեսական ուսուցման ու դործնականի խղումը, ապա յենթադրում է ել ավելի ուժեղացնել պայքարը «ձախ» ոպորտունիստական աղավաղումների, դպրոցի մահացման թեորիայի և ուսուցչի դերի նվաստացման դեմ» (Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումներից)։

Պոլիտեխնիզմը նեղ, մանկավարժական կարդի պրոբլեմից վեր է ածվել սոցիալիստական շինարարության հսկայական տընտեսական քաղաքական խնդրի։

Լենինն ասել է, թե «պետք է ձգտել հասնելու այն բանին, որ յուրաքանչյուր ֆաբրիկա, յուրաքանչյուր էլեկտրոկայան վերածվի լուսավորության ոջախի»։ Սոցիալիզմի հենակետերը ամենամոտ ժամանակները պետք է վերածվեն կուլտուրական հեղափոխության և սոցիալիստական շինարարության կարեվորագույն ոջախի՝ դպրոցի պոլիտեխնիզացիայի հենակետերի՝ Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեի սեպտեմբերի վորոշումը (նախնական և միջնակարգ դպրոցների մասին) լրիվ իրագործելու համար։

Ցնդելով կուսակցության և պրոլետարական պետության այդ պատասխանատու առաջադրություններից և մեզ պարտավոր համարելով դրանց կատարման մեջ ակտիվ մասնակիցներ լինելու, մենք . . . . . դործարանի (ֆաբրիկայի) ներկայացուցիչներս, դործարանի վարչության, դործարանի տեղկոմի, Համկոմկուսի (բ) և ՀամԼԿՅԵՄ բջիջների և դործարանի (ֆաբրիկայի) բանվորների ընդհանուր ժողովի անունից մի կողմից, և դպրոցի վարիչի . . . . . , դպրոցական խորհրդի, տեղկոմի, դպրոցի աշակերտական խորհրդի և աշակերտների ու մանկավարժների ընդհանուր ժողովի անունից՝ մյուս կողմից, կողում ենք ներկա պայմանագիրը . . . . . ժամանակով, որը հետևյալն է.—

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆ ԻՐ ՎՐԱ ՑԵ ՎԵՐՑՆՈՒՄ՝ ՀԱՆԴՆՊ ԴՊՐՈՑԻ

1. Ապահովել բանվոր հարվածայինների մասնակցությունը դպրոցի կարևորագույն կազմակերպությունների մեջ՝ վերջիններիս մեջ դործնական աշխատանք տանելու համար, նրանց դպրոցական աշխատանքը համարելով հիմնական հասարակական (կուսակցական կամ արհմիութենական) բեռնավորում։

ա. Առաջ քաշել . . . . . ընկերներ հետևյալ կազմակերպություններում աշխատելու համար.

Դպրոցական խորհուրդ . . . . . մարդ.
Ծնողական խորհուրդ . . . . . »

2. ՀԱՄԼԿՑԵՄ-ի բջիջը առաջ է քաշում . . . . . կոմյերիտական, ոգնելու համար . . . . . դպրոցի ՀԱՄԼԿՑԵՄ բջիջին . . . . մարդով, աշակերտական ինքնավարությանը . . . . մարդով:

3. Դպրոցական աշխատանքի վրա վորոշակի պրոլետարական վերահսկողությունն ու ազդեցությունն ապահովելու նպատակով պոլիտարանային ցեխերի սիստեմատիկ կապ ստեղծել առանձին դպրոցական խմբերի հետ: Ցեխերի ղեկավար կազմակերպությունները ներդրավելով բանվորների լայն շերտեր, սիստեմատիկ կերպով մասնակցում են ուսումնական ծրագրերի կատարման, խմբակների աշխատանքի մեջ դասավանդման ակտիվ մեթոդներ մտցնելու, աշխատանքային ուսումնական պլանների ժամանակին և պարապմունքների հաստատուն դասացուցակ կազմակերպելու մեջ: Հատուկ ուշադրություն է դարձվում աշակերտների առաջադիմության առանձին դիսցիպլինների գծով, աշակերտների նյութական ապահովության վրա, արտադրական ուսուցման դրվածքի վրա, ինչպես դպրոցական արհեստանոցում, այնպես և գործարանի ցեխերում, ամեն կերպ ոգնելով դպրոցին աշակերտների կոմունիստական դաստիարակության դրույթի գործում:

Այդ նպատակով ամրացնել . . . . ցեխը . . . . . խմբին, ... ցեխը . . . . խմբին, . . . ցեխը . . . . խմբին, ... ցեխը . . . . . խմբին:

4. Առաջ քաշել . . . . . բարձրորակ բանվոր հարվածաններ (նշել ազգանունները) դպրոցում թե ղեկավար և թե հասարակական աշխատանքի կարգով աշխատելու համար, արհեստանոցներում աշխատելու համար . . . և հետևյալ տեխնիկական խմբակները ղեկավարելու համար . . . :

5. Սոց. համատեղության կարգով առաջ քաշել ընկ. . . . . -ին՝ աշխատելու վորպես դպրոցի վարիչի տեղակալ:

6. Բանվորների և ճարտարապետ-տեխնիկական ուժերի շրջանում կազմակերպել դպրոցի ծրագրերի և արտադրական պլանի քննությունն ու մշակումը:

Դպրոցի ակտիվ մեթոդական աշխատանքի մեջ ներգրավել բարձրորակ բանվորներ:

7. Ճարտարապետ-տեխնիկական ուժերը պարտավորվում են.—

ա) դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ միասին, Լուսժողկոմատի տիպական ծրագրերի հիման վրա, մշակել կոնկրետ ծրագրեր և աշակերտների արտադրական ուսուցման պլան, այն հաշվով, վոր այդ պլանի մեջ կապակցվեն արհեստանոցների, աշխատանքային սենյակների, լաբորատորիաների և հենց իր ձեռնարկության աշխատանքները, սկզբունք ունենալով, վոր աշակերտների արտադրական աշխատանքը յենթարկված լինի դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին:

բ) առաջ քաշել . . . . . անդամներ, դպրոցում հետևյալ դիսցիպլիններն ու խմբակները վարելու համար.—

ա) . . . . . ցույց տալ դիսցիպլինան կամ խմբակը.—ընկ. . . . . .

բ) . . . . . դեկավարելու համար ընկ. . . . . .

8. Դպրոցականների արտադրական ուսուցման մշակված կոնկրետ ծրագրերի հիման վրա ցեխերում տալ աշխատանքային տեղերի անհրաժեշտ քանակություն, աշակերտների արտադրական ուսուցումը կազմակերպելու համար (այսինչ, այսինչ մարդկանց) դրպրոցը . . . . . խումբ:

Աշխատանքային տեղերը և գործիքներն ընտրելիս հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները:

9. Ճարտարապետ-տեխնիկական աշխատակիցների և վարակյալ բանվորների ուժերով ապահովել աշակերտներին սիստեմատիկ կերպով հրահանգելը և ոգնությունը վերջինների արտադրական ուսուցման ժամանակ:

10. Գործարանային վարչությունը պարտավորվում է՝

ա) Անվտանգության տեխնիկայի որինակելի դրվածքի համար միջոցներ ձեռք առնել այն տեղերում, ուր կատարվում է աշակերտների արտադրական ուսուցումը:

բ) Ներդրավել գործարանային բժշկական պունկտը, մի չարք նախազգուշական միջոցառումներ անցկացնելու, աշակերտների աշխատանքի համար որինակելի սանիտարական առողջապահական կահավորություն ստեղծելու նպատակով:

գ) Դպրոցի բոլոր մանկավարժների ձեռնարկության մեջ ունենալիք արտադրական պրակտիկա կազմակերպելու և անցկացնելու համար պայմաններ ապահովել, համաձայն ճարտարապետ-տեխնիկական ուժերի և դպրոցի մանկավարժական կոլեկտիվի կողմից կազմած ուսումնա-արտադրական պլանի: Ձեռնարկության

մեջ մանկավարժների արտադրական ուսուցումը, վորպես դեկավարող առանձնացնել (ցույց տալ աղբանունը) . . . . . .

11. Գործարանային վարչությունը և ճարտարապետ – տեխնիկական ուժերը դպրոցի կողմից առանձնացրած մանկավարժների հետ միատեղ պետք է ստեղծեն մինչև (ցույց տալ ժամանակը) . . . . . գործարանային պոլիտեխնիկական թանգարան (յեթե չի կարելի թանգարան կազմակերպել, պետք է ցույց տրվեն ձեռնարկության պարտավորություններն իր արտադրությունը լաբորատորիաներում և ցուցահանդեսներում անդրադարձնելու ուղղությամբ, դրա համար անհրաժեշտ է նյութեր առանձնացնել):

12. Գործարանային վարչությունը պարտավորվում է դպրոցին հանձնելու ձեռնարկության մեջ չողտագործվող, սակայն աշխատանքային սենյակների, դպրոցական–արհեստանոցների և լաբորատորիաների համար պետքական դազդյահներ, գործիքներ և արտադրության զանազան նյութեր, դպրոցական արհեստանոցները, լաբորատորիաները և աշխատանքային սենյակները կահավորելու և վերակահավորելու համար:

ա) Կահավորել (վերակահավորել) անունը . . . . . արհեստանոցը դազդյահներով . . . . . մոտորներով . . . . . այսինչ, ... (ցույց տալ ժամկետը) . . . . . .

բ) Ստեղծել (վերակահավորել) արհեստանոց, (ցույց տալ հիմնական կահավորումը) . . . . . այսինչ (ցույց տալ ժամկետը) . . . . . .

գ) Կահավորել (վերակահավորել) . . . . . աշխատանքային սենյակները յուրաքանչյուրում . . . . . աշխատանքային տեղերով:

դ) Կահավորել (վերակահավորել) (արհեստանոցների անունները) . . . . . արհեստանոցը:

յե) Ստեղծել . . . . . վերակահավորել . . . . . անունը լաբորատորիաներ . . . . . ցույց տալ ժամկետը:

զ) Անհրաժեշտ հումույթ մատակարարել դպրոցական արհեստանոցներին, լաբորատորիաներին, աշխատանքային սենյակներին, նախորոք հաստատված արտադրական պլանով կատարելիք նորմալ աշխատանքի համար:

13. Ապահովել մշտական աշակցությունն ու ոգնությունը

դպրոցի աշակերտների և մանկավարժների իրենց և այլ արտադրություններում կատարելիք եքսկուրսիաներ կազմակերպելու աշխատանքը:

14. Ապահովել դպրոցի ամառային առողջացնող միջոցառումների կազմակերպումը, վորի համար հատկացնել . . . . ռուբլի:

15. Զբավոր աշակերտներին ոգնելու համար տալ (ցույց տալ քանակը) նպաստ . . . . . յուրաքանչյուրին ամսական . . . . . ռուբլի, ամբողջ ուսման տարվա ընթացքում . . . . . ֆոնդից, թոշակների բաշխումը կատարվում և ձեռնարկության կուլտ. խորհրդի և դպրոցի խորհրդի միջոցով:

16. Հատկացնել . . . . . ռուբլ. ֆոնդ մանկական տեխնիկական դրաղարան և . . . . . ռուբլի՝ դպրոցում արտադպրոցական աշխատանքներ կազմակերպելու համար:

17. Պարտուսը մանկավարժական կազրերով ապահովելու նպատակով ձգտել 100 տոկոսով կիրառելու վերաբաս մարմինների կողմից մանկ. ԲՈՒՀ–երին և Մանկ. աշխատանքների համար կատարված կազրերի բաշխում:

18. Գործարանային կոմիտեն ապահովում է դպրոցի արտադպրոցական աշխատանքի ծավալումը՝ այդ նպատակով հատկացնելով ակումբի շենք, կազմակերպելով մանկական կինո–սեանսներ, բեմադրություններ, դրաղարաններում մանկական բաժինները և այլն:

19. Ֆաբրիկ–գործարանային լրագրում հատկացնել առանձին բաժին դպրոցի աշխատանքները սիստեմատիկորեն լուսաբանելու և այլ հարցերի շուրջը լայն ինքնաքննադատություն ծավալելու նպատակով:

20. 4, 5, 6, 7, և 10 պարագրաֆներում հիշատակված ընկերները ամրացվում են հիշյալ աշխատանքներին վոչ պակաս քան մեկ տարի ժամանակով. նրանց այլ հասարակական աշխատանքի փոխադրելը թույլատրվում է ամենածայրահեղ կարիքի դեպքում, այն պայմանով, վոր նրանց նախորոք փոխարինեն հավասար պատրաստականություն ունեցող աշխատակիցներ:

21. Գործարանային վարչությունը պարտավորվում է արտադրական պրակտիկային մասնակցող աշակերտության աշխատանքի ժամանակամիջոցում տրամադրել արտհագուստ:

22. Գործարանային վարչությունը պարտավորվում է պայմաններ ստեղծել, վորպեսզի արտադրական պրակտիկայի գնացող աշակերտները ոգտվեն գործարանի բուֆետից և ճաշարաններից ընդհանուր հիմունքներով։

23. Գործարանի վարչությունը պարտավորվում է իր ապարատի միջոցով հաշվի առնել աշակերտների գործարանում տարած արտադրական աշխատանքը՝ վորակական և քանակական տեսակետից։

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐ ԻՐ ՎՐԱ ՅԵ ՎԵՐՑՆՈՒՄ ԴՊՐՈՑԸ

1. . . . . դպրոցը պարտավորվում է լիովին կատարել ուսումնական ծրագիրը՝ թե ծավալի և թե վորակի տեսակետից։

2. Լիովին վերջ տալ աշակերտության մաղմանը, և պայքարել յերկրորդ տարին նույն խմբում մնալու դեմ։ Ամեն կերպ բարձրացնել սիստեմատիզացիայի յենթարկված գիտելիքների բնագավառում սովորողների ձեռք բերած գիտելիքների վորակը հետևյալ միջոցներով՝

ա) Թույլ հառաջադիմողների հետ կազմակերպել հատուկ աշխատանք,

բ) բոլոր կարիքավորներին ապահովել սնունդով և թոշակով։

3. Դպրոցը պարտավորվում է աշխատանքի հիմք ընդունել՝ պայքար վորակյալ ուսումնադաստիարակչական աշխատանքի և իսկական պոլիտեխնիկական դաստիարակության համար՝ հետևյալ միջոցներով.

ա) Ուսումնական աշխատանքը կազմակերպել այնպես, վորպեսզի աշակերտների կողմից սիստեմատիզացիայի յենթարկված գիտելիքներին և ունակություններին տիրապետելու չափը համապատասխանի այն պահանջներին, վորպիսիք առաջադրվում են՝ Շ-ամյակների, տեխնիկումների, ՖԶՈՒ-ների և այլ կրթական բարձր հիմնարկների կողմից (Ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, բնագիտություն և աշխարհագրություն)։

բ) Ապահովել դպրոցում ճիշտ և միանձնյա ղեկավարությունը։

գ) Դպրոցում մացնել պարապմունքների կարգն դասացուցակի սիստեմ։

դ) Ուսուցումը կապել արտադրական աշխատանքի հետ, ամեն կերպ զարգացնել աշակերտների կողմից տարվելիք հասարակական աշխատանքի թափը, յենթարկելով այն դպրոցի ուսումնադաստիարակչական նպատակներին։

յե) Ժամանակին կազմել դպրոցի արտադրական պլանը, աշխատանքային ծրագիրը և հետևել նրա կիրառմանը։

4. Մանկավարժական կազմի վորակը բարձրացնելու նպատակով ստեղծել պայմաններ՝ ապահովելու ամբողջ կազմի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներում։

ա) . . . . . մանկավարժների ընդգրկել հեռակա ուսուցման.

բ) . . . . . մանկավարժներ ընդգրկել յերեկոյան դասընթացներում, ինստիտուտներում և կարճատև պատրաստության սիստեմում։

5. Լայն չափով զարգացնել դպրոցում եքսկուրսիոն աշխատանքը, սերտ կերպով կապելով այն դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի հետ։

6. Ամառվա ընթացքում, վորպես առողջապահիկ միջոց, դպրոցը կատարում է հետևյալը՝

ա) . . . . . աշակերտներին տանում է քաղաքից դուրս։

բ) Բարձր խմբերի աշակերտների համար կազմակերպում է յենթաշեֆ կոլտնտեսությունների (խորհտնտեսություն, ՄՏԿ-ներ և այլն) մեջ համապատասխան աշխատանք։

գ) Կազմակերպում է յերկարատև եքսկուրսիաներ (վերջին խմբերը կատարում են եքսկուրսիա դեպի նորակառույց ձեռնարկությունները), միորյա գրոհներ և այլն։

7. Զարգացնել սանիտարական-առողջապահական ունակություններ և տանել աշակերտների մեջ ֆիզդաստիարակություն հետևյալ միջոցներով՝

ա) Սանիտարական մինիմումի պարտադիր կիրառմամբ։

բ) Դպրոցական ռազմական աշխատանք կազմակերպելով։

գ) Ֆիզկուլտուրա (ամառային և ձմեռային հրապարակներ, սահնակներ, ձյունի քոչեր և այլն)։

8. Հասարակական արտադրական աշխատանքը դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին յենթարկելու հիման վրա՝ ակտիվ կերպով մասնակցել ձեռնարկության արտա-

գրական աշխատանքին և ոգնել արտիստների կատարմանը:

ա) Կատարել ձեռնարկի արտադրական պատվերները թե դպրոցի արհեստանոցում և թե ձեռնարկության մեջ՝ արտադրական ուսուցման ընթացքում:

բ) Կազմակերպել բանվորների կողմից ռացիոնալիզացման գծով արված առաջարկների հավաքում, նրանց մշակումն ու կենսագործումը:

գ) Աջակցել ձեռնարկի հասարակական կազմակերպություններին՝ պայքարելու ձեռնարկության ներսում գոյություն ունեցող պրոդուլների, հարբեցողության և հոսունության դեմ:

9. Դպրոցը պարտավորվում է իր ուսումնական շենքերն ազատ ժամերին տրամադրել ձեռնարկի վարչության և գործարանային կոմիտեյի կողմից կազմակերպված դասընթացների, խմբակների և այլ ձեռնարկումների պարապմունքների համար:

10. Հաջող կերպով կազմակերպել ձեռնարկության բանվորների և նրանց ընտանիքների շրջանում գոյություն ունեցող անգրագիտության լիակատար վերացման գործը և ապահովել կիսագրագիտության վերացումը գործարանի (ֆաբրիկայի) . . . . . բանվորների և բանվորների . . . . . կանանց:

11. Լայն կերպով անցկացնել մանկավարժական պրոպագանդա (զրույցներ, զեկուցումներ, դասախոսություններ, կոնսուլտացիաներ և այլն) բանվորների և ընտանիքների շրջանում. դրա հետ միասին կազմակերպել դպրոցին կցված բանվորների և ճարտարապետ-տեխնիկական աշխատակիցների մանկավարժական վերակավորման բարձրացման գործը:

12. Առանձնացնել . . . . . ընկերներ՝ դասախոսություններ, զրույցներ, և զեկուցումներ անցկացնելու զանազան թեմաների շուրջը (տեխնիկական, հակակրոնական, կենցաղային, գիտական, հասարակական, քաղաքական և այլն): Դպրոցն իր վերոհիշյալ աշխատանքի որացուցային պլանը պետք է կազմի գործարանի (ֆաբրիկայի) կուլտխորհուրդի հետ մեկտեղ . . . . . ժամկետում: Նաև առանձնացնել . . . . . ընկերներ՝ ձեռնարկության կողմից կազմակերպված զանազան կուրսերի և հեռակա դասընթացների աշխատանքներին ուժանդակելու համար:

13. Գեղարվեստական խմբակի աշխատանքները կապել ձեռնարկության տնտեսական-քաղաքական խնդիրների հետ, վորի համար՝

ա) Առանձնացնել բրիգադ . . . . . աշակերտներից,

ձեռնարկության բանվորներին, նրանց ընտանիքներին և շրջանի շրջապատող ազգաբնակչությանը գեղարվեստական բեմադրություններով սպասարկելու համար:

բ) Ակտիվ կերպով մասնակցել ձեռնարկության մեջ հեղափոխական տոներն անցկացնելու աշխատանքներին. դպրոցը՝ գեղարվեստական բեմադրություններ անցկացնելու և հեղափոխական տոների պլանը կազմում է գործարանի (ֆաբրիկայի) կուլտ-քաղխորհրդի հետ միասին:

14. Դպրոցն ոգնում է ձեռնարկությանը նրա՝ շեֆարկյալ գյուղի աշխատանքներում, իրականացնելով այդ շեֆությունը յենթաշեֆ կոլտնտեսության ռայոնի դպրոցների վրա, գործնականորեն ոգնելով նրանց պոլիտեխնիզացիայի յենթարկելուն: Դպրոցը պարտավորվում է իր ուժերով կահավորել աշխատանքային անկյուններ յենթաշեֆ կոլտնտեսության ռայոնի . . . . դպրոցներում:

15. Դպրոցի ամբողջ հասարակական աշխատանքը պետք է պլանավորված լինի այնպես, վորպեսզի նա լիովին յենթարկված լինի դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին, չխախտի ամուր դասատախտակները, համապատասխանի յերեխաների ուժերին, առաջացնի հետաքրքրություն և մանկավարժների համար չատեղծի չափից դուրս բեռնավորում, վորը կխանգարի նրանց կողմից դպրոցում ունեցած պարտականությունների կատարմանը:

16. Դպրոցի ամբողջ աշխատանքում զարգացնել սոց. մրցումն ու հարվածայնությունը, ամեն կերպ քաջալերելով հարվածայինների կոլեկտիվին, պարգևատրելով դրանց:

Վերցնելով իրենց վրա ներկա պարտավորությունը, ֆաբրիկա-գործարանային կազմակերպությունները և դպրոցը անհրաժեշտ են համարում ներկա պայմանագրի ստուգում կատարել տարեկան յերկու անգամ . . . . . (նշել ժամկետները):

Ներկա պայմանագիրը պետք է լայն չափով պարզաբանվի ֆաբրիկայի (գործարանի) բանվորների, աշակերտության և դպրոցի աշխատակիցների մեջ:

Ստորագրել են՝

ԳՈՐԾԱՐԱՆԻ ԴԻՐԵԿՏՈՐ՝
ԳՈՐԾԱՐԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԼԿՑԵՄ ԲՋԻԶԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ԴՊՐՈՑԻ ՎԱՐԻՉ՝
ԴՊՐՈՑԻ ՏԵՂԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա-26236

ՏԻՊԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԿՈԼՏԵՐԻՏԴՊՐՈՑՆԵՐԻ ՑԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄՏԿ-ՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Կուսակցության Կենտկոմի վորոշումը՝ տարրական և միջնակարգ դպրոցների մասին, հանդիսանում է պոլիտեխնիզմի հիման վրա մասսայական դպրոցի վերակառուցման նոր շրջանի սկիզբը:

Կուլտուրական հեղափոխության այդ կարևորագույն բաժնում նչելով հետագա հարձակման ծրագիրը, Կենտրոնական Կոմիտեն, վորպես որմա հերթական խնդիր, առաջ է քաշում ընդհանուր, պարտադիր 7-ամյա ուսուցման անցնելը, նպատակ ունենալով կուսակցության ծրագրի՝ մինչև 17 տարեկաններին ընդհանուր ու պոլիտեխնիկական կրթություն տալու պահանջի արագ կիրառումը և նոր աստիճանի վրա յե դնում դպրոցի աշխատանքի վորակի ուժեղ բարձրացման համար մղվող պայքարը, դնելով այնպիսի նոր խնդիրներ Լուսժողկոմատի, ժողովրդական լուսավորության բոլոր որգանների, կենտրոնական և տեղական շահագրգռված բոլոր կազմակերպությունների առաջ, վորոնք կապված են դպրոցական աշխատանքի շրջադարձի և այն սխալների խեղաթյուրումների դեմ մղվող պայքարի հետ, վորոնք տեղի յեն ունեցել դպրոցի պոլիտեխնիկական սկզբունքներով վերակառուցման պրոցեսում:

Անցյալ տարի մեր յերկրի բանվոր դասակարգը և աշխատավորությունը հսկայական հաջողությունների յեն հասել, ինչպես յերկրում ընդհանուր պարտադիր ուսուցումը մտցնելու, նույնպես և դպրոցը պոլիտեխնիկական հիմունքներով վերակառուցելու առաջարկում: Այնուամենայնիվ Համկոմկուսի Կենտկոմի վորոշումը նշում է, վոր տվյալ մոմենտում, դպրոցի հիմնական պակասությունն այն է, վոր ուսուցումը դպրոցում չի տալիս հանրակրթական գիտելիքների բավարար ծավալ և անբավարար կերպով է վերցնում տեխնիկումների և բարձրագույն դպրոցի համար միանգամայն դրական մարդիկ պատրաստելու խնդիրը, մարդիկ, վորոնք լավ տիրապետեն գիտությունների հիմունքներին (ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն): Կենտկոմիտեն սրանով ընդգծում է. պոլիտեխնիզացիան մի շարք դեպքերում ստանում է ձևական բնույթ և չի պատրաստում սոցիալիզմի բաղմակողմանի կերպով զարգացած կառուցողներ, վորոնք տեսականը կապեն գործնականի հետ և տիրապետեն տեխնիկային:

Այս ուսումնական տարվա գլխավոր խնդիրը հանդիսանում է

այդ արմատական թերության վերացումը: Ինչպես դպրոցը, այնպես և կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների, ՄՏԿ-ների բանվորները ու աշխատավորները, ինչպես նաև նրանց բոլոր կազմակերպությունները պետք է հիշեն, վոր «յուրաքանչյուր փորձ, վորն արվում է դպրոցի պոլիտեխնիզացիան անջատելու գիտությունների սիստեմատիկ և ճիշտ յուրացումից, առանձնապես ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի յուրացումից, վորոնց դասավանդումը պետք է դրված լինի խիստ վորոշ ու խնամքով մշակված ծրագրի և ուսման պլանների հիման վրա և տարվի խստիվ, հաստատուն դասատախտակով, հանդիսանում է պոլիտեխնիկական դպրոցի զաղափարի ամենակոպիտ խեղաթյուրում» (Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումից):

Պետք է ավելի ամրացնել դպրոցի կապը արտադրության հետ, ձգտելով ուսուցման միացմանն արտադրական աշխատանքին այն հիմունքով, վոր «աշակերտների ամբողջ հասարակական-արտադրական աշխատանքը յենթարկվի դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին» (Համկոմկուսի Կենտկոմի վորոշումներից): Պոլիտեխնիկական դպրոցի համար մղվող պայքարի դեմ Համկոմկուսի բայլշևիկյան Կենտկոմի կողմից մեզ վրա դրված հսկայական խնդիրների կատարումը կախված է նրանից, թե մեր ամենօրյա աշխատանքի ընթացքում մենք վորքան վճռական կերպով հակահարված կտանք դպրոցի և ուսուցչի դերն իջեցնելու բոլոր աղավաղումներին ու փորձերին, դպրոցը շրջապատող միջավայրի մեջ լուծելու ձգտումներին, աշակերտների արտադրողական աշխատանքը կազմակերպելու մեջ կատարվող խեղաթյուրումներին (դպրոցական ուսուցումը հասարակական աշխատանքի յենթարկելը և այլն), նախորդք ու գործնականում չըստուգված մեթոդների մասսայական մասշտաբով կիրառելու ձգտումներին, վորոնք բղխում են դպրոցի մահացման հակալենինյան «ձախ» թեորիայից:

«Պոլիտեխնիկական դպրոցի կառուցման ճանապարհի գլխավոր վտանգը կուսակցության աջ ոպորտունիստական աղավաղումներն են, վորի դեմ պետք է հաջող կերպով պայքարել: Այդ աղավաղումները տանում են դեպի դպրոցի պոլիտեխնիզացիայից հրաժարվելը, դեպի հին, սխոլաստիկ դպրոցը պահպանելու փորձերը, դեպի տեսական ուսուցման ու գործնականի խզումը, ապա յենթադրում է և՛ ավելի ուժեղացնել պայքարը «ձախ» ոպորտունիստական աղավաղումների, դպրոցի մահացման թեորիայի և ու-

սուցչի դերի նվաստացման դեմ» (Համկոմկուսի Կենտկոմի վորոշումներից):

Պոլիտեխնիզմը նեղ մանկավարժական կարգի պրոբլեմից վեր է ածվել սոցիալիստական շինարարության հսկայական տնտեսական քաղաքական խնդրի: Լենինն ասել է, վոր «Պետք է ձգտել հասնելու այն բանին, վոր յուրաքանչյուր ֆաբրիկա, յուրաքանչյուր էլեկտրոկայան լուսավորության ոջախի վերածվի»: Սոցիալիզմի հենակետերն ամենամոտ ժամանակում պետք է վերածվեն կուլտուրական հեղափոխության և սոցիալիստական շինարարության կարեվորագույն ոջախի՝ դպրոցը պոլիտեխնիզացիայի յենթարկելու և Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեի սեպտեմբերյան վորոշումը՝ նախնական և միջնակարգ դպրոցների մասին, լրիվ իրագործելու համար:

Ցեղնելով կուսակցության և պրոլետարական պետության այդ պատասխանատու առաջադրություններից և մեզ պարտավոր համարելով դրանց կատարման մեջ ակտիվ մասնակից լինելու, մենք՝ . . . . . կոլտնտեսության (խորհտնտեսության, ՄՏԿ-ի) վարչության ներկայացուցիչներս կուս. և ԼԿՑԵՄ բջիջների և կոլեկտիվի անդամների (կամ խորտնտեսության, ՄՏԿ-ի բանվորների) ընդհանուր ժողովի անունից մի կողմից, ... դպրոցի վարչի, դպրոցական խորհրդի, տեղկոմի, դպրոցի աշակերտական խորհրդի և աշակերտների ու ուսուցիչների ընդհանուր ժողովի անունից մյուս կողմից, կապում ենք ներկա պայմանագիրը . . . . . ժամանակով հետևյալի համար:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐ ԻՐ ՎՐԱ ՑԵ ՎԵՐՑՆՈՒՄ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՄՏԿ-Ն)

1. Ապահովել կոլխոզնիկ հարվածայինների (կամ սովխոզի, ՄՏԿ-ի հարվածային բանվորների) մասնակցությունը դպրոցական կարեվորագույն կազմակերպություններում, վերջինների մեջ գործնական աշխատանք տանելու համար, նրանց դպրոցական աշխատանքը համարելով հիմնական հասարակական (կուսակցական կամ արհմիութենական) բեռնավորում:

ա) Առաջ քաշել . . . . . ընկերներ, հետևյալ կազմակերպություններում աշխատելու համար.

Դպրոցական խորհրդում . . . . . մարդ.

Ծնողական խորհրդում . . . . . մարդ:

2. ԼԿՑԵՄ բջիջն առաջ է քաշում . . . . . կոմյերիտական ոգնելու համար:

ա) ԼԿՑԵՄ բջիջին . . . . . մարդ. բ) Պիոներ կոլեկտիվին . . . . . մարդ. գ) Դպրոցական խորհրդին . . . . . մարդ:

3. Դպրոցական աշխատանքի վրա պրոլետարական վերահսկողությունն ու նրա ազդեցությունն ապահովելու նպատակով սիստեմատիկ կապ պահպանել ՄՏԿ-ի (սովխոզի, կոլխոզի) առանձին ցեխերի, բաժինների և դպրոցական առանձին խմբակների միջև:

Ցեխերի և բաժինների ղեկավար կազմակերպությունները սիստեմատիկորեն մասնակցում են ուսումնական ծրագրերի ճիշտ կատարման գծով տարվող ստուգման աշխատանքներին: Դրա հետ միասին գործոն մասնակցություն են ցույց տալիս խմբակների աշխատանքների մեջ դասավանդման ակտիվ մեթոդներ կիրառելու, պարապմունքների հաստատուն դասացուցակ և պլանների ժամանակին կազմելու մեջ:

Հատուկ ուշադրություն է դարձվում առանձին դիսցիպլինների գծով աշակերտության ցույց տված առաջադիմության և նրանց նյութական ապահովության վրա: Առանձին ուշադրություն է դարձվում թե՛ դպրոցական արհեստանոցում և թե՛ ՄՏԿ-ի ցեխերում ու այլ բաժիններում ուսուցման գործի ճիշտ դրվածքի վրա, ամեն կերպ ոգնելով դպրոցին՝ աշակերտների կոմունիստական դաստիարակության գործն իր բարձրության վրա դնելու համար:

Այդ նպատակով ամրացնել . . . . . ցեխը (բաժինը) . . . . . խմբին, ... ցեխը (բաժինը) . . . . . խմբին, ... ցեխը (բաժինը) . . . . . խմբին:

4. Առաջ քաշել . . . . . բարձրորակ բանվոր, կոլխոզնիկ հարվածայիններ՝ . . . . . (նշել ազգանուն, անուն) դպրոցում աշխատելու, ինչպես համատեղության, այնպես էլ հասարակական բեռնավորման կարգով:

Դպրոցի արհեստանոցում տեխնիկական խմբակները ղեկավարելու համար . . . . . մասնագետ:

5. Սոցհամատեղության կարգով առաջ քաշել . . . . . -ին՝ աշխատելու վորպես . . . . . դպրոցի վարչի տեղակալ:

6. Բանվորների, կոլխոզնիկների, ինժեներ-տեխնիկական պեր-

անալի և տնտեսության այլ մասնագիտական ուժերի լայն մասնակցությամբ քննության առնել և մշակել դպրոցի ծրագիրն ու արտադրական պլանը: Ներգրավել բարձրորակ բանվորներ ու մասնակից դարձնել նրանց դպրոցների ակտիվ մեթոդական աշխատանքներին:

7. Տնտեսության մասնագետները պարտավորվում են.

ա) դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ միասին Լուսժողկոմատի տիպական ծրագրերի հիման վրա մշակել ուսուցման կոնկրետ ծրագիրը և արտադրական պլանը այնպես, որ այդ պլաններում արտացոլվի աշխատանքը արհեստանոցում, աշխատանքի սենյակներում, լաբորատորիաներում և տնտեսության մեջ, պահպանելով հիմնականում այն սկզբունքը, որ արտադրական աշխատանքը յենթակա լինի դպրոցի ուսումնա-դաստիարակչական նպատակներին:

բ) Առաջ քաշել . . . . . մասնագետ՝ ղեկավարելու դպրոցի հետևյալ դիսցիպլինաները և խմբերը.

ա) . . . . . (նշել դիսցիպլինան կամ խումբը) . . . . . ղեկավարելու համար ընկ. . . . . (նշել ազգանունը):

բ) . . . . . ղեկավարելու համար ընկ. . . . . .

գ) . . . . . ղեկավարելու համար ընկ.. . . . . .

8. Կոլխոզի (կամ սովխոզի, ՄՏԿ) վարչությանը պետք է հնարավորություն տալ կազմակերպելու դպրոցի արտադրական ուսուցման աշխատանքները կոլխոզում հետևյալ չափով.

1-ին խմբակ——ղեկտեսյում . . . . ժամ
2-րդ » » . . . . . »
3-րդ » » . . . . . » և այլն:

9. Կոլխոզի բրիգադներին կից կազմակերպել աշակերտական բրիգադներ կամ աշակերտներին կցել բրիգադներին, որոնց աշխատանքներին ուղեկցելու յեն բրիգադայի վարակյալ աշխատողները:

Բրիգադայի աշխատանքների ժամանակ պետք է ինկատի ունենալ աշակերտության հասակն ու ֆիզիկական կարողությունը:

10. Ամբողջ արտադրության բաժիններին ու ցեխերին ծանոթացնելու և արտադրական աշխատանք տանելու (կալսողներ, հնձողներ, սլեսարներ, տոկարներ և այլն) նպատակով վարչությունը

պարտավոր է հնարավորություն տալ, որ աշակերտները հերթական կարգով կարողանան բոլոր բրիգադներում և ցեխերում լինել:

11. Վարչությունը պարտավորվում է թույլ տալ ուղղելու արտադրական բոլոր գործիքներից, ուսումնասիրելու և աշխատելու բարդ մեքենաների վրա, յեթե այդ բխում է դպրոցի աշխատանքների բնույթից և ծրագրից:

12. Վարչությունը պարտավորվում է իր արտադրական բոլոր խորհրդակցություններում, վարչության դռներից նիստերում, պլանային ինտարակտացիոն հանձնաժողովներին մասնակից դարձնել հատկապես մեծահասակ (բարձր խմբի) աշակերտներին:

13. Վարչությունը պարտավոր է աշակերտներին մասնակից դարձնել դյուղատնտեսական և ռացիոնալիզացման աշխատանքներին, բացի դրանից, աշակերտների կողմից դրված ռացիոնալիզատորական առաջարկները պետք է վարչության կողմից քննության առնվեն առնվազն.....որվա ընթացքում:

14. Վարչությունը պարտավորվում է դպրոցի հետ կազմակերպել աշխատանք իր արհեստանոցում (կոլխոզի, սովխոզի, կամ ՄՏԿ-ի), հետևյալ չափով:

1-ին խմբում ղեկադայում ..... ժամ.
2-րդ » » ..... »
3-րդ » » ..... » և այլն:

Այս աշխատանքի կատարման պատասխանատվությունը վարչության կողմից դրվում է ընկ. . . . . վրա:

15. Վարչությունը պարտավորվում է հնարավորություն ստեղծել տնտեսության մասնագետների միջոցով դպրոցի ուսուցչության համար կազմակերպելու արտադրական պրակտիկա տնտեսության մեջ, համաձայն ուսումնա-արտադրական ծրագրի:

Տնտեսության մեջ ուսուցչության համար արտադրական պրակտիկայի կազմակերպիչ և նշանակվում ընկ. . . . . .-ը:

16. Վարչությունը պարտավորվում է դպրոցին տալ տնտեսության համար վոչ գործադրելիք, բայց դպրոցի արհեստանոցի, աշխատանքային սենյակների և լաբորատորիաների համար պետքական գործիքները, գազգահներ և զանազան նյութերը ոգտագործելու համար:

17. Վարչությունը պարտավորվում է իր վրա վերցնել. . . . . չքավոր աշակերտների տաք նախաճաշը, . . . հոգու հագուստով և . . . . . հոգու գրենական պիտույքներով ապահովելու գործը:

18. Վարչությունը պարտավորվում է ուժանդակել պայքարելու աշակերտների 2-րդ տարին նույն խմբում մնալու և մաղումների դեմ, վորի համար պատասխանատու է դարձնում ընկ. . . . . -ին:

19. Վարչությունը պարտավորվում է դպրոցի կահավորման համար տրամադրել . . . . . ռուբլի, իսկ դպրոցի շենքի կառուցման կամ վերանորոգման համար . . . . . ռուբլի:

20. Վարչությունը պարտավորվում է . . . . . հեկտար ցանքս կատարել հողուտ դպրոցի:

21. Կազմակերպելիք արհեստանոցների և լաբորատորիաների համար հատկացնել . . . . . ռուբլի:

22. Դպրոցը հողամաս չունենալու դեպքում կոլխոզի վարչությունը դպրոցի աշխատանքների համար տրամադրում է հատուկ հողամաս . . . . հեկտար. տվյալ հողամասի հերկը և այլ աշխատանքները, վորը հնարավոր չի կատարել դպրոցի և աշակերտների ուժերով, կատարում է կոլխոզը: Դպրոցը տվյալ հողամասի վրա կատարում է փորձնական ուսումնական աշխատանքներ:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՈՐ ԻՐ ՎՐԱ ՑԵ ՎԵՐՑՆՈՒՄ ԴՊՐՈՑԸ

1. Դպրոցը պարտավորվում է ամբողջությամբ կատարել ուսումնական ծրագիրը ինչպես քանակական, նույնպես և վորակական ցուցանիշների տեսակետից:

2. 100 տոկոսով լիկվիդացիայի յենթարկել 2-րդ տարին մնալը և մաղումները, բարձրացնելով աշակերտության ուսուցման վորակը հետևյալ միջոցներով.

ա) Կազմակերպելով հատուկ պարապմունքներ հետամնացների համար:

բ) Ապահովելով կարիքավոր աշակերտներին թոշակով և սննդով:

3. Դպրոցը պարտավորվում է իր աշխատանքի հիմք ընդունել պայքար հանուն ուսումնադաստիարակչական վորակի բարձրացման և իսկական պոլիտեխնիկական դաստիարակության համար, հետևյալ միջոցներով.

ա) Ուսուցման աշխատանքները կազմակերպել և դնել այնպիսի հիմքերի վրա, վոր աշակերտությունը կարողանա յուրացնել հանրագիտական առարկաների (ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, քնագիտություն, աշխարհագրություն և այլն) մաքսիմումը, վորը կհամապատասխանի հաշվարդ ուսումնական ատոմիճանի պահանջին:

բ) Իր կոչման բարձրության վրա դնելով դպրոցի կառավարման գործը և ամրացնելով միանձնյա ղեկավարությունը:

գ) Դպրոցում մտցնելով պարապմունքների կայուն դասացուցակ:

դ) Կապելով ուսուցումն արտադրական աշխատանքի հետ և ամեն կերպ զարգացնելով աշակերտների հասարակական աշխատանքը, յենթարկելով այն դպրոցի ուսումնա-դաստիարակչական նպատակներին:

ե) Իր ժամանակին կազմելով դպրոցի արտադրական պլանը և նրա լրիվ կատարումը:

4. . . . . դպրոցի ուսուցիչներին ընդգրկել հեռակա կուրսերում:

5. Լայն ծավալել դպրոցում եքսկուրսիոն աշխատանքը, սերտ կերպով կապելով այն դպրոցի ուսումնա-դաստիարակչական նպատակներին:

6. Կատարել եքսկուրսիա մոտակա արդյունաբերական քաղաքը՝ աշակերտներին ծանոթացնելու արդյունաբերության հիմնական ճյուղերին (մոտ քաղաք չլինելու դեպքում տանել կոլյեքիոթի վերջին խումբը):

7. Զարգացնել աշակերտների սան-լուս. գիտելիքները և ֆիզիկական դաստիարակության գործը, պարտադիր կերպով անցնելով սանիտարական մինիմումը և ֆիզիկական դաստիարակությունը:

8. Ակտիվ կերպով մասնակցել տնտեսության արտադրական աշխատանքին և ուժանդակել նրա արդիականացման կատարմանը, այն հիմունքներով, վոր հասարակական արտադրական աշխատանքը յենթակա չլինի դպրոցի ուսումնադաստիարակչական նպատակին:

ա) Կատարել տնտեսության արտադրության պատվերը դպրոցի արհեստանոցում և տնտեսության մեջ՝ արտադրական ուսուցման ժամանակամիջոցում:

բ) Կազմակերպված ձևով հավաքել կոլխոզնիկների և աշխատավորների կողմից ռացիոնալիզացիայի վերաբերյալ յեղած առաջարկները՝ մշակելու և կյանքում կիրառելու համար:

գ) Ուժանդակել տնտեսության հասարակական կազմակերպություններին՝ պայքարելու ձեռնարկության ներսում կոլխոզային պրոդուկտների, հարբեցողության, պոկողականության և հոսունության դեմ:

9. Վերացնել տնտեսության անդամների անդրագիտությունը և կիսագրագիտությունը . . . հողի տղամարդ, ... հողի կին:

10. Դպրոցը ուսուցիչ . . . . . -ին ամրացնում է կոլխոզի կուլտկենցաղային հանձնաժողովին:

ա) Կոլխոզում (սովխոզում). քաղաքակրթական աշխատանք տանելու համար ունենալ հատուկ սեկցիա, ղեկավարությամբ ուս. . . . . -ի, անդամակցությամբ աշակերտներ . . . . . -ի. սեկցիան պարտավորվում է վերացնել կոլխոզի (սովխոզի, ՄՏԿ-ի և այլն) . . . . . հողու անդրագիտությունն ու կիսագրագիտությունը:

բ) Նախադպրոցական գործին աջակցող և ոժանդակող խմբակի ղեկավարման աշխատանքները հանձնել . . . . . -ին, անդամակցությամբ . . . . . -ի:

11. Դպրոցը պարտավորվում է տնտեսության աշխատողների համար կազմակերպել տեխնիկային տիրապետելու խմբակներ:

12. Դպրոցը պարտավորվում է կոլխոզնիկների համար կազմակերպել սիստեմատիկ դրույցներ հետևյալ չափով.

ա) Կոլխոզշինարարություն . . . . . ժամ.

բ) Ագրոտեխնիկայի մասին . . . . . »

գ) Բնագիտական . . . . . »

դ) Կուլտուրական շինարարություն . . . »

ե) Հակակրոնական և այլն . . . . . »

13. Դպրոցը պարտավորվում է.

ա) Ուղնել կոլխոզին նոր տեխնիկական կուլտուրաների մշակման, իսկ անասնապահական վայրերում՝ անասունների ցեղի ապնրվացման գործում:

բ) Կազմակերպել պայքար վնասատուների դեմ:

գ) Կոլխոզում և գյուղում տարածել թերթեր . . . . . որինակ:

դ) . . . . . հողու դարձնել հեռակա կուրսի ուսանողներ:

14. Դպրոցը պարտավորվում է ակտիվ մասնակցել տնտեսության կողմից հեղափոխական տոների անցկացման գործին:

15. Լայն ծավալել դպրոցի բոլոր աշխատանքների ասպարեզում սոցմրցումն ու հարվածայնությունը, պարգևատրել վերջիններին:

16. Դպրոցի բոլոր հասարակական աշխատանքները պետք է ծրագրված լինեն այնպես, որ այդպիսիներն ամբողջապես բղխեն դպրոցի ուսումնա-դաստիարակչական նպատակներից, չխախտելով դպրոցի կայուն դասատախտակը, համապատասխանեն յերեխաների ուժերին և պահանջներին, առանց չդառնան դասատուների խիստ ծանրաբեռնվածությանը, խոչընդոտ չհանդիսանան դպրոցում նրանց անմիջական պարտականությունների կատարմանը:

Վերցնելով սույն պայմանագրի պարտավորությունը մեզ վրա, պայմանագրի կատարման ստուգումն անցկացնել տարեկան յերկու անգամ (նշել ժամկետը):

Սույն պայմանագիրը պետք է լայն կերպով մասսայականացնել տնտեսության և դպրոցի աշխատողների ընդհանուր ժողովներում (կոլխոզի, սովխոզի, ՄՏԿ-ի):

ԿՈԼԽՈԶԻ, ՍՈՎԽՈԶԻ, ՄՏԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ՝
ԼԿՑԵՄ ԲԶԻԶԻ ՓՈՓՈՏՈՒՂԱՐ՝
ԴՊՐՈՑԻ ՎԱՐԻՉ՝
ԱՇԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՀՀ Ազգային գրադարան
NL0935777

757-1931/0

II
26236